




FPV «ԴՐՈՆՆԵՐԻՑ» ԶՐԱՀԱՓՈԽԱԴՐԻՉՆԵՐԻ (ԶՓՄ)  
ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴ-ԱՌԱՋԱՐԿՆԵՐ  
ՄԱՍ II

Կազմեց պահեստի փոխգնդապետ Ա.Ամիրզադյանը, ՊաՀԱԿ

*FPV «դրոնների» հիմնական տեսակների, դրանց մարտական կիրառման եղանակների ու FPV «դրոններից» պաշտպանվելու հիմնական եղանակների մասին տե՛ս ՄԱՍ I-ում*

# 1. Զրահավոխադրիչների սարքավորումը պաշտպանիչ վահանով և ցանցերով

## 1.1 ԶՓՄ-82Ա սարքավորված պաշտպանիչ վահանով և ցանցերով



## 1.2 Պաշտպանիչ վահանի և պաշտպանիչ ցանցերի պատրաստման համար անհրաժեշտ նյութերը և գործիքները

1. Ցանցե էկրան (բջիջների չափը 20 x 20 մմ կամ 30 x 30 մմ), պատրաստված պողպատե ձողերից (տրամագիծը 2-3 մմ)՝ 16մ<sup>2</sup>:
2. Պաշտպանիչ վահանի շրջանակ. Պրոֆիլի հատվածքը՝ 30x30 մմ (30 մմ տրամագծով խողովակ)՝ 75 գ.մ.:
3. Հենարան. պրոֆիլ 40x40 մմ հատվածքով (խողովակի տրամագծը 40 մմ)՝ 8 գ.մ.:
4. Քողարկման ցանց՝ 36 մ<sup>2</sup> կամ 3-5 մմ տրամագծով արամիդե (տեքստիլ) քուղ:
5. M12x40 հեղյուս՝ 850 հատ:
6. M12 մանեկ՝ 850 հատ:
7. Եռակցման ապարատ՝ 1 հատ:
8. Անկյունային հղկող մեքենա՝ 1 հատ:


- 9. 3 մմ էլեկտրոդներ՝ 3 կգ:
- 10. Կտրող սկավառակ՝ 10 հատ:

### 1.3 ՋՓՄ-82Ա-ի պաշտպանիչ վահանի և պաշտպանիչ ցանցերի տեղադրման առաջարկություններ

Սկզբում անհրաժեշտ է 30x30 մմ քառակուսի հատվածքով մետաղական խողովակներից պատրաստել պահանջվող երկարությամբ պաշտպանիչ վահանի կմախքը, որոնք ամրակցել եռակցուման միջոցով:


Այնուհետև կմախքի տանիքին կցվում է 20 x 20 մմ (կամ 30 x 30 մմ) բջիջների չափով ցանցային էկրանը:

Վարնետքի ենթական զինամթերքը գլորելու համար վահանի տանիքը պետք է պատրաստվի հորիզոնական զծից 15-25 աստիճան թեք մակերեսով :



Պատրաստված պաշտպանիչ վահանը տեղադրվում է գրահափոխադրիչի իրանին 6-8 պողպատե հենակների վրա (առնվազն 40x40 մմ պրոֆիլի հատվածք կամ խողովակներ 40 մմ տրամագծով):

Պատրաստված պաշտպանիչ վահանը տեղադրվում է ՋՓՄ-ի աշտարակի վերին մասում՝ 500 մմ բարձրությամբ:




Վահանի ամրացման պողպատե հենակները մոնտաժվում են ՋՓՄ-ի իրանի կառուցվածքային տարրերին՝ հաշվի առնելով մտոցները բացելու (փակելու) հնարավորությունը, ինչպես նաև մքենայի արտաքին սարքավորումների գործունեության պահպանումը և զենքից կրակ բացելու հնարավորությունը:


## Պաշտպանիչ ցանցերի պատրաստումը

Ցանցերը պատրաստվում են ըստ պաշտպանության ենթակա տարրի չափի (պրոյեկցիայի): Ցանց պատրաստելու համար օպտիմալ է օգտագործել 3-5 մմ տրամագծով արամիդե կամ տեքստիլ լար (քուղ): Լարից (քուղից) հյուսեք ցանց առնվազն 75 x 75 մմ բջջի չափով, բայց ոչ ավելի քան 80 x 80 մմ: Առկայության դեպքում կարելի է օգտագործել պատրաստի ցանց: Բջիջների հանգույցներում ամրացվում են M12 հեղուսները մանեկներով:

Բջիջների չափերը ոչ պակաս 75 x 75 մմ և ոչ ավելի քան 80 x 80 մմ




Ցանցերը ամրացվում են շրջանակին: Ցանցերի տեղադրման շրջանակները պահանջվող երկարությամբ պատրաստվում են 30x30 մմ քառակուսի հատվածքով մետաղական խողովակներից ըստ զրահափոխադրիչի պաշտպանվող տարրի չափերի (դիմապակիներ, դռներ, մտոցներ), որոք այնուհետև եռակցվում են:



ՁՓՄ-ի շրջանակը պատրաստվում է դիմային պրոյեկցիայի չափերով


Ցանցերով շրջանակները տեղադրվում են բարձակի վրա՝ իրանից առնվազն 200 մմ հեռավորությամբ:



Առնվազն 200մմ

Ցանցերը ամրացվում են՝ հաշվի առնելով մտոցների կափարիչները բացելու (փակելու) հնարավորությունը, աշտարակի շրջադարձը, ինչպես նաև արտաքին սարքավորումների գործունեությունը (նշանոցները, սպառազինությունը և այլն):

*ԶՓՄ-ն ռադիոէլեկտրոնային ճնշման միջոցներով սարքավորման, ՄԴՄ -689 աղմուկի գեներատորի տեղադրման, նրա հիմնական մարտավարատեխնիկական բնութագրի, բաղկացուցիչ մասերի և ՄԴՄ-689 աղմուկի գեներատորի շահագործման սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններն ու առանձնահատկությունները մանրամասն շարադրված են ՄԱՍ I-ում*




Ալեհավաք մոդուլները տեղադրեք ԶՓՄ-ի հարթ հիմքով մետաղական մակերեսին (օրինակ՝ վահանի վերին հարթ մակերեսին)

**ԶՓՄ-82Ա-ի վրա ՄԴՄ -689 աղմուկի գեներատորի տեղադրման առաջարկություններ**

ԱԹՄ-ների ճնշման «Волнорез» համալիրի տեղադրման առանձնահատկությունների, համալիրի մարտավարատեխնիկական բնութագրի և ռադիոէլեկտրոնային ճնշման միջոցների շահագործման ընթացքում անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ ծանոթացեք [ՄԱՍ I-ում](#)

«Волнорез» համալիրը տեղադրեք ՉՓՄ-ի հարթ հիմքով մետաղական մակերեսին



ՉՓՄ-82Ա-ի վրա «Волнорез» համալիրի տեղադրման առաջարկություններ